

– Ահա այդ բանին համար իմ հոս ուշանալս անօգուտ կը տեսնեմ, վասնզի դու իմ աչս խորհրդեանս վրայ պետք էր շատոնց մտածած լինեիր ինքն իրենդ. դու էիր, որ քիչ առաջ իրաւունք կ'ուտայիր իմ անցեալ տարուան առաջարկութեանս, դարձեալ կարելի է վայրկեան մը նաեւ ունիւք, մի՛ դանդաղիր, կարելի է ժամ մը չանցած ամէն բան անօգուտ չինի, կարելի է, որ հիմա նաեւ շատ ուշ մնացեր ենք, Յայոց Սպարապետ...

Այս խօսքերն ըսած ժամանակ Յովնան մեծ ուշադրութեամբ ձիերու ոտնաձայնին ականջ դրաւ, գողի մը պէս նայելով պատուհանին մօտեցաւ, իր սուր աչքերուն արտաքոյ կարգի արթնութիւն մը եկաւ եւ դառնալով Սմբատայ՝

– Ինձի համար պետք է լինի այդ արաբ ձիաւորաց խումբը,– ըսաւ անխռով:

– Ի՞նչ կ'ըսես, ինչի՞ն գիտես:

– Ես տեսայ քանի մը կասկածելի մարդիկ, որ դիտող աչքով ինձ կը նայէին՝ երբ ես քեզ կը սպասէի. անշուշտ Բուղայի իմաց տուած են:

– Բայց իմ տունս ո՞վ կրնայ համարձակիլ...

– Մոկաց երկիրը քու տունդ չես, իշխան, Բուղայի ափին մէջն ես:

– Ի՞նչ պիտի ընես ուրեմն, ըսաւ Սմբատ այլայլած եւ երեսները կարմրելով:

– Ես իմ փախստեանս ճամփան ունիմ, ափսո՛ս որ դու իմ ուզած մարդս չես: Ես ուզեցի Սմբատներու առաջինն ընել քեզ, աւելի մեծ քան զբիրատեանն, աւելի մեծ քան զվարդան Մամիկոնեան, բայց դու չուզեցիր. վա՛յ Յայաստանի: